

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ա Ջ Ա Տ Ջ Է Յ Թ Ո Ւ Ն

ՄԻՇՏ ՅԱՐԱՏԵԻԵՆԲ.

Անտարակոյս, աւանակն է, որ այսօր յաղթական կերպով իր ականջ խլացնող երգեցողութիւնն է հանում ամբողջ Արեւելքում: Թաւրթիան, որ դեռ օգտակար կենդանիների հաշւում կը լինէր, եթէ աւանակ լինէր, յիրաւի, չափազանց յամառ գտնվեցաւ, բայց և բաւական ճարպիկ իր աղտեղած ախոռի աղբը քրքրելու և նրա հոտով, մինչև զգուանքի ու փախանքի աստիճան, ամբողջ աշխարհ վարակելու:

Եւ ի՞նչ. այն տէրութիւնները, որոնք իրանց հոչակում են կենդանիների թաղաւոր, այսօր այդ աւանակի աքացիների տակ են ընկած:

Արեան հեղեղն անվերջանալի հոսանքով շարունակվում է տարածվել հայաբնակ բոլոր վայրերում և անկիւն չը մնաց, որ արիւնով ցօղված չը լինի, մինչդեռ ապստամբութեան յաղթական դրօշը սկսաւ ծածանվել Օւթթունի ազատ լեռան գագաթին: Եւ լուսեղէն ճառագայթով ազատութեան ու անկախութեան փարոսն ահա մօտ երկու ամիս է ինչ փայլում է ամբողջ հայութեան գլխի վրայ:

Ո՛չ, նա չը պիտի մարէ, այդ փարոսը: Եթէ սուլթանի աւազակային դաշոյնից անընդհատ կաթում է հայ ծերունու, կարճի, կնկայ, կոյսի ու մանկան արիւնը — դա դեռ երբէք չը պիտի կարողանայ մեզ յուսահատեցնել, չը պիտի կարողանայ մեզ թուլացնել բարոյապէս, ջլատել մեր ոյժերը, քայքայել մեր եռանդը, կործանել մեր ձգտումները, նսեմացնել մեր նպատակը, որը բարձր է ամեն անաջողութիւնից, ամեն թշուառութիւնից, ամեն աղէտից, ամեն սարսափից, որը պէտք է այդ բոլորի վրայով անցնէ լուսեղէն պայծառ շերտով և վերջապէս լուսաւորէ հայ ազագայ ազատ սերունդներին և անմահ պահէ քսաներեսուն հազար նահատակների սուրբ յիշատակը: Այդ նպատակն անմահ է. անմահ է այն մեծ մարտը, որ մղվում է այդ նպատակի համար և որ կը մղվէ, մինչև որ կը լինի բռնութիւնը մեր գլխին իր ահաւոր սպանիչ կացնով և ազատութեան կայծը՝ մեր սրտում:

Այդ սրբազան պատերազմի կենդանի և ամենափառաւոր շրջանն այսօր է, երբ ամեն օր ու շաբաթ նորանոր տեղեկութիւններ են գալիս քաջարի Օւթթունի յաղթական ճակատամարտերի ու

արշաւանքների մասին: Օւթթունը պէտք է շարունակէ իր այդ հերոսական ընթացքը, թէկուզ մինչև որ մնայ այնտեղ վերջին կարիճը, որ իր վերջին բողբոսում կօրհնէ ընկածներին իր սուրբ շարժանքով և կանխէ բռնութիւնը, հայութեանը կրտսերով մեռնել ինչպէս ինքը և կամ ապրել ազատ:

Վսե՛մ գործ, վսե՛մ պատերազմ, վսե՛մ կրտսի, որ մի փոքր ազգին դարձնում է հսկայ՝ յաղթութեան միջոցին և մեծ՝ նոյն իսկ անկման մէջ:

Չը վհատվենք: Մեծ, անմահ, հինգ հարիւր տարի ստրկութիւնից ի վեր չեղած մի պատմական վեհ օրինակ ունենք մեր առջև — ապստամբ Օւթթուն՝ ստացած ահագին ծաւալ: Նա խօսում է մեր սրտի, մեր հոգու, մեր երակների հետ, նա եռանդում է մեր արիւնը և հրահրում մեր եռանդը:

Հարունակներ: Նորանոր գործերով կապացուցենք աշխարհին, եթէ հարկ լինի, որ եւրօպական տէրութիւնների կեղծաւոր ու ջնջութաւոր կան դաշինքը սապօնէ գնդակի պէս պայթելով, չէ կարող մեզ շփոթեցնել մեր ընթացքի մէջ: Հաստատակամ ու վճռական, անձնուրաց ու ողբերված՝ մենք կարող կը լինենք սուլթան բաշխօղակ ոճրագործի և նրա դաւակից ռուսական հայտաւաց միապետութեան խաղերը ի դերու հանել:

Վստահ լինենք մեր վրայ. ժողովրդային սուրբ դատի ասպարէզի վրայ առաջ գնենք մեր բոլոր ազգային բարոյական ու նիւթական ոյժերը. կրօններ, պատերազմներ անընդհատ, ամեն աղէտների միջով անցնելով. մեր ազատութեան համար՝ յարատեւներ, դարձեալ յարատեւներ, միշտ յարատեւներ, և մերը կը լինի յաղթանակը:

ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՒՑԱԿ.

ՇԱՐՅԱՆՈՒՄ. — ԺԱՆՆՎ. ԲԱՆԴԱՆԻ 265 ՓՐԱՆԿ ՀԱՅԳԱՆԱԿ-ՎԱԾ. ՀԵՏԵՆԵԱՆ ԱՆՁԵՐԻՑ Թ. Մ. 50 Փ., Մ. Ե. 25 Փ., Ե. Մ. 30 Փ., Լ. Ա. 20 Փ., Զ. Մ. 10 Փ., Ա. Բ. 25 Փ., Զ. 10 Փ., Փ. 5 Փ., Պ. 10 Փ., Ե. 10 Փ., ԲԻՆԻՑ 10 Փ., ԷՍՄԵՐ 50 Փ.:

ԵՐԿՐՈՐԴ. — ԳԱՀԻՐԷՆԻՑ Մ. Գ.-ՕՓՓՈՒ ՄԻՋՈՑՈՎ 5 ԱՍԳԼ. ԼԻՐԱ:

ՓՐԱՆՍՍԻԱ. — ՊԱՐԻՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱՄԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՆՈՅՆ ԲԱՆԴԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ. ԵՆ ՈՉ ՈՒՍԱՆՈՂ. ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԻՆԻՑ 1,200 ՓՐԱՆԿ. Ա. ՈՒՍԱՆՈՂՈՅ 10 Փ., Ե. Ե. Գ.-ԴՅ 20 Փ.

ՌՈՒՄԵՆԻԱ. — Պ. ԲԱՆԴԱՆԻ 2. Խ. ԵՐԶՆԱԿԱՆ 20 Փ. Օ. Ս. ՍԵՐԱՍԱՑԻ, Ղ. Ս., Ն. Կ., Գ. Զ., ԿԱՄԱՆՑԻՆԵՐ ԵՆ Խ. Ե. ՇԱՊ. ԳԱՐԱՆՍԱՆՈՅ 10-ԱԿԱՆ Փ., Զ. Պ. ԵՆ Պ. Կ. ԿԱՄԱՆՑԻՆԵՐ 5-ԱԿԱՆ ՓՐԱՆԿ:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1-ԷՆ — ՀՈԿՏ. 26.

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ. — ՀՆՉԱԿԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՅԱՂՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ. — ԶԷՅԹՈՒՆԻ ԵՒ ԶՕՐԱՆՈՅԻ ԳՐԱԽՈՒՄԸ.
— ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ.

ԶԷՅԹՈՒՆԻ-ԶՕՐԱՆՈՅԻՆ.

Առաւարտութիւնը հոկտեմբեր ամսի սկիզբներին ըս-
կաւ մեծ կասկածներ ունենալ Զէյթունի և շրջակայ
հայ գիւղերու վրայ, որ իրենք շնչակեան յեղափո-
խականներ կը պահեն և նախապատրաստութիւններ կը
տեսնան ապստամբելու համար թիւրք վայրերի կառա-
վարութեան դէմ: Առաւարտութիւնն իր այդ կասկա-
ծանքով իր հարստահարութիւններն այն աստիճան ա-
ւելցուց խեղճ գիւղացիների վրայ, որ ինքն եղաւ ա-
ռաջին պատճառն ապստամբութեան շուտափոյթ տե-
ղի ունենալուն: Ժողովուրդը մի կողմէ անտեսապէս բռ-
նորովն քայքայուած, մի կողմէ սաստիկ քաղցած
և միւս կողմէ այդ հարստահարութիւնների պատճառով
սաստիկ կատաղեր էր և սկսեր էր արդէն ապստամբու-
թեան նշանները բուռն կերպով հետզհետէ երևան
բերել չորս կողմերէն հրաբուխի պարբերական պայ-
թումներու նման և ակներև կը նշմարուէր մեծ, կար-
միր օրերու բոցավառ արշալոյսը: Արդէն մինչև այդ
թուականը 10 անգամ Ալապաշ (Արեգի) հայաբը-
նակ գիւղը կոխեր էին և մեծ հարստահարութիւններ
գործած էին: Գիւղացիները նախորդ փորձերէն խրատ-
ուած՝ երբեք անձնատուր չեղան և միշտ ապաստանե-
ցան իրենց ամուր լեռները: Այս դէպքերի վրայ կա-
ռավարութիւնը ձերբակալեց ֆրոնտալները և զէյ-
թունցիները Մարաշի, Ալաիսթանի, Եսարփուզի և Կո-
կիսոնի մէջ, որոնք գնացեր էին իրենց առօրեայ ապ-
րուստը հայթայթելու համար, և կառավարութիւնը պա-
շտօնակներով ու չէրքէզներով մշտապէս փակեց այդ
կարևոր ճանապարհները հայերի առաջ՝ Զէյթունցի-
ներն անօթութենէ մեռցնելու համար: Միւս կողմէ Ան-
տէրուի բռնապետ Եսայի Զ-Օղլին 4-500 հոգ-
ւոյ պաշտօնակներ իր գլուխը հաւաքած սկսեց կո-
ղոպել և ասպատակել Եսայի Զ-Գալէի, Անա-
պատի, Շիվիլիի, Պուշտուգի և Կապանի բո-
լոր հայաբնակ գիւղերը: Ամեն կողմերէ օգնութեան
լուրը կը հասնէր Զէյթուն: Սեպտեմբեր 28-ին Զէյ-
թունի կառավարութիւնն ուղարկեր էր ոստիկան Սիւ-
լէյմանը մէկ այլ ոստիկանով Ալապաշի շարժումները
լուսնելու: Ալապաշցիները կատաղած վառեցին այդ ոս-
տիկանները: Այս դէպքի վրայ հայ գիւղերու մէջ չը
կարողացան մտնել թիւրք ոստիկաններ կամ պաշտո-
նականեր. տուրք կամ տասանորդ ժողովելն արդէն կանգ
առած էր:

Հոկտեմբեր ամսոյ 4-ին Մարաշի հարկարպետ
չէրքէզ Հաճի-Ասլան աղան 15 ոստիկան հետն ա-
ռած եկաւ Զէյթուն. մէկ օր մնալէ յետոյ գիշերանց
փախաւ Բերդուսի թիւրք գիւղերը: Այնտեղ իր գլու-
խուն հաւաքելով 100-ի չափ պաշտօնակներ ուղեց
մտնել Ալապաշ գիւղը և վառել: Գիւղացիները քաջա-
բար դիմադրեցին և մէկ ոստիկան սպաննելով ետ մը-
ղեցին: Հոկտեմբեր 6-ին նորէն 200 հոգի առնելով՝
Հաճի-Ասլան աղան մէկ այլ ճանապարհով ուղեց ներս
մտնել. այստեղ ևս Ալապաշցիները քաջաբար դիմադրե-

րեցին և մէկ ժամ կուռելէ յետոյ՝ ետ մղեցին թիւրք
պաշտօնակները:

Հոկտեմբեր ամսի 5-ին նշանաւոր թիւրք ասպա-
տակ Սալեմա Օղլու Իւմաէտը՝ ֆրոնտալի մօտ
Սէկ ըստած տեղը՝ Ղուժարլըի վրանաբնակ քիւր-
տերի հետ կռուի կը բռնուի և կսպաննէ 4 մարդ և կը
վիրաւորէ 7 հոգի. կռուի պատճառն այն է եղեր, որ
Ղուժարլըցիներէն կը պահանջէ իր կինը, որ մի տարի
առաջ իր ձեռքէն յափշտակեր էին: Այս դէպքի առ-
թիւ Մարաշէն մի հազարապետ, 7 ոստիկան, մի բժիշկ
և մի քնիչ կուգան ֆրոնտալ: Հազարապետը կանցնի
Պուշտուգի և Թէլէմէլիքի հայաբնակ գիւղերը
և կըսկսի սաստիկ նեղել, կապել, ծեծել և հայհոյել,
որ իրենք հիւրասիրեր են այդ աւաղակները: Պուշտուգ-
ցի հայերը շնչասպառ կը դիմեն ֆրոնտալ: ֆրոնտալի
երիտասարդութիւնն ալ կատաղած կը կտրեն հազարա-
պետի ճանապարհը և կսպաննեն հազարապետն ու
հինգ ոստիկանները: Ոստիկաններէն երկուքը հայ լի-
նելուն թող կուտան՝ իրենց մարթիններն առնելէ յե-
տոյ: Ազատ կարձակեն նաև բժիշկն ու քնիչը:

Նոյն օրը ֆրոնտալցիք կսպաննեն նաև մի հարիւ-
րապետ, որ Հաճիէն եկեր էր և կը գրգռէր Կոկի-
սոնի թիւրքերն ու չէրքէզները և ուստեր էր հայե-
րը բնաջինջ ընել:

Այս դէպքերը տեղի ունեցան հոկտեմբեր 10-ին:
Հետզհետէ տեղի ունեցան սոյն կարևոր դէպքե-
րը, հասունացնելով ապստամբութիւնը, և հայ ժողովու-
րի հետ որոշեցինք բացարձակ կերպով պարզել ա-
պստամբութեան դրօշակը:

Այդ սրբազան օրը, այդ տօնելի օրը, հոկտեմբեր
12-ն էր:

Առաջին դրօշակը պարզեց «Աւօ» զօրագունը
Մալիւար գիւղի հիւսիսակողմի մի ձորի մէջ, Թէ-
քիրի ջուրէն 200 կանգուն հեռաւորութեան վրայ մէկ
արտի մէջ, մի Ղըշլայի և վրանի ներքև: «Աւօ»
զօրագունը բաղկացած էր Այնթապի, Մարաշի, Հա-
ճիի, Զէյթունի և Խարբերդի ասպատակային ամենա-
ընտել խմբերէն:

Առաւօտեան ժամը 2-էն մինչև 5 հետզհետէ շին-
չակեան շուիրական դրօշակի ներքև հաւաքուեցան հե-
տեալ գիւղապետները իրենց քաջերով:

Ֆրոնտալէն Աւետիս աղա Տնտեսան,
Պերոս աղա 2ինիկէօղլեան, Մանուէլ աղա
Ալաճաճեան, գիւղապետ Եղիա և ֆրոնտալի քաջ
և անձնուէր վանահայր Բարթոլոմէմէոս վարդա-
պետ: — Ալապաշ (Արեգի) գիւղէն՝ քաջ և հըռ-
չակաւոր գիւղապետ միւսիւր Խաչեր քէհեայ Կա-
րապետեան, որ սկիզբէն միացած էր մեզ՝ շնչակ-
եաններու հետ և մեծ քաջալերութեան պատճառ էր
եղած ամեն կողմ: Փանոս աղա Միխայէլեան, որ
իր կեանքի մէջ միշտ կռուող հայրենասէրն եղած
է: — Մելիալ (Աւագ կալ) գիւղէն Պօղոս աղան,
Տէլի Արթին աղա նշանաւոր քաջ և Ղաղար
աղան: Մալիւար գիւղէն Հաճի Մարտիրոս ա-
ղա: Մալիւար գիւղէն քաջութիւնն ու անձնուի-
րութիւնը և դէպի շնչակեաններս ցոյց տուած գործ-
նական ջանքերն ու համակրութիւնն անուրանալի են և
տեղացի ընկերների թուի մէջ առաջին տեղը կը բռնէ:
— Ալաբօզանէն Փանոս աղա, քաջ և համեստ
գիւղապետ: — Թէլէմէլիք գիւղէն Տէր-Մարտիրո-
ս քաջ քահանայ Տէր-Մարտիրոսեանը, որ

սկիզբէն մինչև վերջ գովելի անձնութեամբ և ջանքով միացած մեղ հետ, առաջ կը մղէր հայրենիքի ս. դատը և իբր ճշմարիտ հովիւ իրագործեց իր սրբազան պարտականութիւնները: — Եկած էին նաև Հաճի-Տէրէի և Ֆէնքի (վանքի) գիւղապետները:

Դամբ 6-ի ատենները եկաւ Զէյթունի նշանաւոր խումբը իր անձնուէր ու համբաւաւոր պետի՝ Նազարէթ աղա Նորաշխարհեանի (Պապիկ փաշայի եղբայր) առաջնորդութեամբ, որ կառավարութեան սիրելի չափուշն էր, բայց հայրենիքի համար ձգեց իր շուքն ու տարազը և մարթինին առած մտաւ նուիրական դրօշի ներքեւ... զոհեց նա ամեն բան և ի վերջոյ պիտի տեսնենք թէ շատ քաջագործութիւններ իր մով առաջացաւ:

Եթէ ամեն մի «տարի փետուրներով զարդարուած հայ» Նազարէթ չափուշի օրինակին հետեւէր, այսօր մեր ազգը շատոնց սարբեր հանգամանք ստացեր էր... Նազարէթ չափուշը մեծ հեղինակութիւն ու համակրանք կը վայելէր ամբողջ ապստամբ Զէյթունի մէջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՈՐՈՇՈՒՄ.

Այս օրի միջոցներուն ամբողջովին հաւաքուած էին բոլոր գիւղացիները, աղաները և կրօնական պետերը: Սպիտակ վրանի ներքեւ Հնչակեան յեղափոխական առաջնորդների շուրջը կարգ-կարգ նստած էին վերոյիշեալ բոլոր պետերը: Ազգային դրօշակի հետ կը ծածանէր նաև յեղափոխական արևնագոյն դրօշակը: Ժողովէն առաջ երգուեցան «Հնչակ»-ի պաշտօնական երգը, Զէյթունի և Սասունի երգերը... Ընդհ. միաձայն որոշուածով՝ որոշուեցաւ. ա.) Մինչև վերջին շունչ կոռուի թշնամի անպիտան թիւրք կառավարութեան և իր անարգար օրէնքների դէմ, լինիլ ինքնուրոյն և ձեռք բերել ազգային, անտեսական և քաղաքական կատարեալ ազատութիւն: բ.) 2ի վնասել և չի կոտորել թիւրք եղբայրներն, եթէ իրենք նախադրեալ չը լինին և եթէ համերաշխ լինին մեղ հետ: գ.) Ժողովը որոշեց, որ մեր բանակը յաջորդ օրը դրուի Ալապաշի վրայ, Զէյթունի զօրանցի դիմացը, Շէնպէք լեռան գագաթին:

Ժողովը վերջացաւ երգերով ու ցնծութեամբ:

Հոկտեմբերի 13 ուրբաթ առաւօտ. — Առաւօտեան դէմ բոլոր գիւղացիները մեկնեցան իրենց տեղերը՝ բոլոր քաջերով հետևեալ օրը հաւաքուելու և զօրանցի վրայ յարձակում գործելու համար: Մընաց միայն յառաջագնաց «Աւօ» զօրագունը:

Արջալոյսի ատեններին լուր հասաւ և մի տոմսակ Խաչեր Բէհայի կողմէ, որ «շուտով օգնութեան հասէք, բողմածիւ կանոնաւոր զօրքեր և պաշտպաններ յարձակեցան մեր վրայ»... Անմիջապէս Վոսափցութեանս գործիչներու կողմէ հրաւիրագրեր ուղղվեցան Զէյթուն և բոլոր գիւղապետներուն՝ շուտով հասնիլ Ալապաշ: Իսկ առաջին անգամ ճանապարհ ընկան «Աւօ» զօրագունը, Հաճի Մարտիրոս աղա Շատալախեանը և Ալաբօզան Փանոս աղաներն իրենց քաջ խմբերով:

Հոկտեմբերի 14 շաբաթ օր. — Արջալոյսը կը ծագէր նուրբ, տարածուն և կէս թափանցիկ ամպերու ետեւէն, երբ «Աւօ» զօրագունը հասաւ Ալապաշի 2ախր-Տէրէ կոչուած նշանաւոր և պատմական վայրը, ուր հաւաքուել էին 200-ի մօտ աղապաշիներ, որոնց կէսն անլէն և մնացածներն ալ չափավարներով զինուած: 2ախր-Տէրէն մի ձորամէջ է՝ մի քանի արտավար հարթագետիւով, որուն շուրջը բարձրացած են

սեպաձև անտառապատ բլուրներ: Ասկէ 25-28 տարի առաջ 2ախր-Տէրէի մէջ տեղի ունեցած է Զէյթունի ժողովրդային մեծ ճակատամարտը 40,000 չէրքէղների դէմ, ուր հերոսաբար ընկած են 101 քաջեր, որոնց 70-ը Զէյթունի Պօղպոյի թաղէն, հերոսներ և քաջագործութիւններ, որոնք վրիպած են մինչև ցայժմ հայկական պատմութեան էջերէն...

Օրը մեղմ էր. երկնքի երեսին տարածուել էին որպէս մետաքսափայլ սպիտակ սաւաններ թերթիկ-թերթիկ թխագոյն ամպիկներ, որոց ետեւէն կարծաւորէին մեր վրայ արևի առաջին ճաճանչները, գրեթէ ժամը 3-ի ատեններին: Այս օրի մօտ հասան Թէլէմէլիքի և Ֆընուզի մի գունդը 30-40 հոգիէ բաղկացած Տ. Մարտիրոս քահանայի և գիւղապետ Եղիաի առաջնորդութեամբ: Ժամը 8-ի ատեններին հասան Միսալի կողմէն նոյնչափ քաջեր Տէլի-Արթին աղայի առաջնորդութեամբ: Իրենց հետ ոգեսպառ վալեր ու հասեր էին Պապ Բէլվանէսեան քաջ երիտասարդը և հռչակաւոր ասպատակ և ապստամբապետ Հաճի Փանոս Շամ-Բէշիշեանը, որ ասկէ 5 տարի առաջ իր փոքրիկ խմբով գրաւած է Զէյթունի կառավարական պալատը և տարիներով անհաշտ կռիւ էր մղած անհամար թիւրք զինուորների և պաշտպանների դէմ՝ առանց անձնատուր լինելու կամ յուսահատելու: Իւրաքանչիւր անգամին, երբ կը նշմարուէր որ և է խումբ որ կը գար, ամբողջ խումբերը միացած դրօշակները պարզած առաջ կը վազէին և կը գիմաւորէին եկօր եղբայրները: Վոսափցութեանս կողմէ կուղարկուէր «Աւօ» զօրագնդի կէսը նշանաւոր խմբապետ Զալլա գի հրամանատարութեան ներքեւ: Իրիկուան ժամը 11-ի ատեններին հասաւ 65 քաջերով Նազարէթ աղա Նորաշխարհեանը, իր գեղեցիկ ու ասպետական հասակով ու տարազով ձի նստած, իր երկու կողմերն ունենալով իր եղբօր՝ Պապիկ փաշայի երկու կտրիճ որդիները Աւետիսը 24 տարեկան և Աւետիքը 17 տարեկան: Բանակը հազար ու մէկ «կեցցէներով» ընդունեց զինք, որ իր հետ բերաւ յոյս, քաջալեր, խորհուրդ, զինւորական գործունէութիւն և ազդեցութիւն:

2ախր-Տէրէն ջահան գետի հիւսիսային ափի վրայ կը գտնուի: Կեսը և ձորը բաժանող մի բլուր միայն կայ. իսկ դուրա ճիշդ դիմաց, գետի միւս հարաւային ափի վրայ, մի բարձր բլուրի գագաթին, Մասլըթի ըստած թիւրք գիւղի մօտ, թրքական բանակի անհամար վրանները դրուած էին: Բլուրը կը նըմանէր մի բերդի և որը կը ձևացնէր մի տէլթա ջահան գետի և Բերդուսի գետակի միացումով: Թըշնամիի բանակը կը բաղկանար քանի մը հազար կանոնաւոր զօրքերէ ու պաշտպաններէ: Իսկ հայկական բանակը՝ որ կազմուել էր Հնչակեանների նախաձեռնութեամբ անոնցմէ 5-6 անգամ պակաս էր այդ ատեն:

Հրճուալի էր տեսնել հայկական բանակի պարն ու խիղճը... մորթուած ոչխարների ձենձերային հոտը մթնոլորտը փակած էր... ամենքը կարծես հարսանիք կը գնային... Իրենց ս. դատի և եղբայրների պաշտպանութեան համար՝ մղած կռիւը հարսանիք էր իրենց համար: Նշանակելի էր դիւցազն Զալլա գի ձիարշաւը, տուած խրախոյսը, գոռումն ու գոչումը: Նա որ «քալենք» ըսէր, ամբողջ բանակը իր ետեւէն կը վազէր:

Այս գիշերին ամեն բան լուռ էր... միայն վարպետութեան համար հաղարաւոր ճրագներ վառուեցան շրջակայ բլուրների վրայ: Ամեն գործունէութիւն կը

լինէր անաղմուկ, անշիտի և խիստ կանոնաւոր կերպով Նազարէթ իշխանի, Շամ-Քէշիշեանի, Ջալլադի, Խաչեր քէհեայի և Միխայէլեան փանոս աղայի հրամանատարութեան ներքեւ, որոց ամենքի վրայ կը հսկէին Կուսակցութեանս երեք գործիչները:

Արշալոյսը դեռ չէր ծագած, գիշերուան թիւրքական ժամը տաս և կէսին ապստամբապետ Ջալլադը 150 քաջեր առած՝ Խաչեր քէհեայի և Միխայէլեան փանոս աղայի հետ առանց շուկի Ջահանի անցքէն անցնելով գնացին պաշարել թիւրքական բանակի նստած բլուրը: Մնացած քաջերը, Կուսակցութեանս նշանաւոր գործիչներէն պ. Ապահի, Նազարէթ իշխանի, Շամ-Քէշիշեանի և Հաճի Մարտիրոսի հրամանատարութեան ներքեւ՝ թշնամի բանակի ձեռք գիծաց, բլուրի վրայ զետեղուեցան: Սակայն ախոս, որ միջավայրն այնքան հեռու էր, որ հրացանների կապարներէն շատ քիչեր գրեթէ պիտի հասնէին:

Արշալոյսը պարզուեցաւ և սկսան փայլել թիւրքական ձերմակ վրանները... և ահա՛ յայտարար նշանը տրուեցաւ, առաջին հրացանի որոտը լսուեցաւ. դա հերոս Ջալլադն էր, որ առաջին հրացան արձակելուն՝ թշնամի բանակէն մի հարիւրապետ սպաններ էր... Առաջին յայտարար նշանէն յետոյ, չորս կողմէն անհամար հրացաններ սկսան պարպել... նոյնը սկսեց երկիւղի մէջ եղած թշնամին: Բոլոր բլուրները կէս ժամուան մէջ ծուխի մէջ պատուեցան... Հրացանների ահեղ որոտումներէն Ջահանի կատաղի դղողիչ կարկաչը չէր լսուիր... հաղարաւոր գնդակներ կարկուտի տարափի նման կը թափուին մեր գլխին... Բայց ախոս, որ գետը չանցնող հայերի հրացանների գնդակները չէին հասնիր թշնամիին և դիմացն անցնող 150 քաջերը պաշարուեցան օգնութեան համող հաղարաւոր թիւրք գիւղացիներէն, որոնք կը բաղկանային Բերդուսի, Սարը-Չուգուրի և Մասիւրթի թիւրք գիւղերէն: Այս վտանգալի պահուն Նազարէթ իշխանը կատաղած՝ յարձակեցաւ և կօշիկներով միասին գետնն անցաւ իր եղբայրների օգնութեան. իր ետեւէն անցան նաև 50-ի չափ քաջեր «Աւօ» զօրագնդի դարձեալ միմասի հետ, որոյ մէջ նշանաւոր հանգիսացան և մեծ քաջագործութիւններ ըրին, գնդակի տարափի մէջ, Խարբերդի պ. Նշան Աղաբոսեանը՝ 23 տարեկան քաջ երիտասարդը և ջերմ՝ Հնչակեան, Այնթապի խմբէն Յակոբ Տարագճեան և Գրիգոր Գասպարեան: Նազարէթ իշխանը գնացեր էր ձեռք Ջալլադի հետ, մի մայրի ծառի ետեւէն կը կուռէին թշնամի բանակէն հազիւ 30 քայլ հեռու... այնքան մօտեցեր էին: Եւ այդ երկուքի ձեռքն ալ մարթիւնի հրացաններ կային և երկուսն ալ շատ վայելուչ՝ զինուորական տարազներ էին հագած, երկուսն ալ բարձրահասակ ու կորովի, որպէս զերենք ծածկող մայրին, հաղարաւոր կապարները իրենց գլխին կը թափուէին:

Երբ ու կէս ժամ կուռէէ յետոյ, ջուրն անցնող հայկական բանակի ռազմավթերը սպառեցաւ, և հազիւ թէ օգնութիւն ուղարկուեցաւ, երբ թշնամին մօտ 2000 պաշարեց զերենք չորս կողմէն Բերդուս չայի դաշտագետնի մէջ:

Այդ տեղ տեղն պիտի ունենար մի կոտորած, Սասունի կոտորածէն աւելի, բայց մի հերոս, մէկ առիւծ գիծացի կողմէն, ժողովրդի գլուխն անցած, «Աւօ» զօրա-

գնդի մնացած ոյժը հաւաքելով ազատեց 200 հայրենասէր քաջերի կեանքը:

Այդ հերոսն էր Կուսակցութեանս անմահ գործիչներէն պ. Ապահը... — պ. Ապահը գետի միւս ափի վրայ, մի թուփի ետեւ անցնելով, իր հետն առած «Աւօ» զօրագնդի Այնթապի խմբէն Արթուր Թապալ-Գասպարեանը և Մարաշի խմբէն Ստեփան Տուռնեան, Հաճի Մարտիրոսը, Ալաբուզան փանոս աղան և մի շարք լաւ հրացանաւորներ. սկսան արագ-արագ գնդակներ արձակել յարձակող և պաշարող զօրքերի վրայ, որոց շատերն սպաննուեցան: Ապահի, Արթուրի և բոլոր հայերու հրացանները շատ արագ և յանդուգն կը գործէին: Այնպէս որ թշնամին ստիպուած եղաւ թողուլ ջուրն անցնող քաջերը, որոնք ազատ նահանջեցին և զգեստով ջուրն անցան և ապաստանեցան իրենց եղբայրների մօտ:

Իսկ պ. Ապահի գլխին բիւրաւոր գնդակներ կը թափուէին: Զի մոռնալ յիշել, որ Կուսակցութեանս անմահ գործիչներէն պ. Հրաչեան, որ երբէք անմասն չէր ուզեր մնալ ցանկալի պատերազմէն, իր գեղեցիկ զէնքերը տուած լինելով ապստամբապետներին, ինքը շարունակ ռազմավթեր կը բաշխէր և կրակի մէջէն այնչափ խրախոյս կը կարգար, որ իր ձայնը քաջուեր էր. իր վիճակին ենթարկուած էին «Աւօ» զօրագնդէն Մարաշի պ. Թորոս Ճին-Փանոսեանը և Մարաշի գործիչներէն պ. Մինաս Ալմասեանը: Այս պարագային Զէյթունէն օգնութեան հասան և քաջաբար կուռեցան Կարկալար թաղէն Կարապետ Եֆէնտի Տէր-Յակոբեանը և փանոս Խզըրթեան անուն քաջ երիտասարդը փոքրիկ մի խմբով:

Գետն անցնող բոլոր քաջերը ետ նահանջեցին... բայց կուռի վայրը թողուցին երկու առիւծ... որոնց մասին քիչ յետոյ պիտի խօսինք... Կուռի հետեւէն անորոշ մնաց. թշնամիի կողմէն մեռած էին 30 զինուոր և 4 թիւրք գիւղացի. իսկ հայերէն մեռեալ 3 և 4 վիրաւոր:

Այն ծառի տակ ուր Նազարէթ իշխանն ու հերոս Ջալլադը քաջ կը կուռէին, թշնամին անհամար բաղմութեամբ իրենց վրայ յարձակեցաւ. Ջալլադը 4 ժամուռան միջոցին արձակել էր իր ամեն փամփուշտը և սպաններ էր մի հարիւրապետ և 7 զինուոր, իսկ շատ վիրաւորներ թողուցեր էր: Երբ իր 8-ը փամփուշտը մշնացեր էր ընկերներն անոր առաջարկել էին փախչել, բայց ինքն արհամարհելով ուզել էր մինչև վերջ կուռիլ ու եղած տեղէն դուրս չէր եկել: Իսկ Նազարէթ իշխանի փամփուշտները հատած լինելով կուռէ ձին նստիլ և ետ նահանջել. ձի նստած ատեն ձախ ոտքի սրունքէն թեթեւ կերպով կը վիրաւորուի և չը թողուր, որ թշնամին երկրորդ հրացանը պարպէ, ինքը ղարատաղի վեցհարուածով կը տապալէ թշնամի զօրքը և անվտանգ կը հասնի: Իսկ Ջալլադը, երբ կապուէ իր բոլոր փամփուշտները և կուռէ ձի նստիլ ու հեռանալ, թշնամիի անողորմ գնդակը կը գայ և կը ծակէ այն աղբը, երկամուռքի քովէն, որ ձիու ասպանդակի վրայ բարձրացուցած էր և առիւծը մայրի ծառի նման կը փռուի գետինը... և թշնամիները հասնելով իսկոյն գլուխը կտրեցին և Մարաշ տարին:

Ապագային կը թողուի, որ նկարագրուի մեր հերոսի կենսագրութիւնը մանրամասն կերպով, բայց այժմ համառօտակի գրել նուիրական պարտք կը համարիմ ինձ: Ջալլադը բարձրահասակ, յաղթանդամ, ինչքան

բարձր, այնքան լայն թիկունքով, արծուի քթով, սև յօնք, սև աչքեր, սև նորաբոյս ընչացքով, լայն, մի քիչ թաթափական դեմքով մէկ առիւծ էր և հազիւ 21-22 տարեկան կը լինէր: Ինքը Արկիստոնի բնիկ Տաշ-Օլուխ գիւղէն էր. իր իսկական անունն էր Կարապետ Ղըր-Փանոսեան: Հինգ տարիէ ի վեր փախստական էր և տաճիկ 20110-ի (Ալշար Խամա-յէլի) բոլոր գործունէութեանը մասնակից եղած էր: 1894 թուականի նոյեմբեր ամսին Ամուգ Օվայի մէջ հիւանդացած լինելով իր ընկերները կը թողուն զինք մի թիւրքի մօտ և կը հեռանան: Մեծ հոգեկոտնացած լինելով քաջագործութեան մէջ Ղար-Օղլան անուն տակ, թիւրքերը կը նախաձիւն, որ կեանքը իրենց տակ, քաջութիւն, զէնք և ձի չը վայելէր. ծանր հիւանդութեան պարագային վրան կը յարձակին, կը կողոպտեն զինք և կուզեն սպաննել, բայց ոստիկանի կինը գիշերանց կը փախցունէ զինք, որ կը գնայ մատուտակ հանող հայերի քով, ուսկից մերկ կանցնի Անտիոք: Զանապարհին զինք կողոպտողների մէկը կը հանդիպի իրեն, ինքն ալ զայն կողոպտելով իր բընունցքով, նորա լաթերը կը հագնի և կը փախի Սուէտիայի Հաճի-Հապիպի հայաբնակ գիւղն. այնտեղ երկար փորձուելէ յետոյ հանդիպեցաւ Հնչ. Կուսակցութեան Արիկիայի ներկայացուցիչ...-ին, զոր ընդունեց և քիչ յետոյ «Մարօ» զորագնդին պետերէն մին կարգուեցաւ. Կը թողունք Սուէտիայի կողմերը գործած քաջագործութիւնները և միայն այսբան կը սենք, որ Սուէտիայի հայերը կը պաշտէին զինքը և այնքան խիստ պաշարման միջոցի ինքն էր, որ պաշարող քարանձախներէ շղթաները ձեռքէն շնչակեան գործիչներն անվտանգ հասուց Զէյթունի և Հաճի-Հապիպի լեռները: Մենք ակնատես եղանք, որ բոլոր Ամուգի Բահանլը աշերէթը կը գողար իրմէ և գրնչուններն ու Խսլահիյէյի, Քիւրտ Տաղիի, Ճէլիքանլիի, Թէճիւրլիի քիւրտերը կը գովէին իր քաջագործութիւններն ու առատաձեռնութիւնը:

Կա գործի չը գնացած իր անելիքը կը պատմէր. եթէ զինքը չը ճանչողներէն մին տեսնար, կըսէր թէ սա մի մեծախօս ու մեծամիտ է, բայց ստուգիւ խօսածէն աւելի կընէր շատ աղող կերպով... Իր կեանքին մէջ յանձնուած մի գործ երբէք թերախտար չէ թողուցեր... Կա իր վարձուքի մէջ, իր խօսակցութեան մէջ պարզ էր և կոշտ, բայց բոլորն իր բնական պարզութեան, կոշտութեան և անկեղծութեան մէջ էին. արուեստակա՞ր երբէք գործ չունէր անոր մէջ... Ժողովուրդը կը պաշտէր զինքը. սաստիկ կատեր նա շահասիրութիւնն ու անբարոյականութիւնը... պատառ հացը հարկը աղքատի կը կերցնէր. նա սաստիկ անկեղծ էր փորձիկ անիրաւութեան դէմ և իր ընկերների համար ամբողջ կեանքը կը զոհէր: Կա կը պաշտէր ու կը պաշտպանէր քաջերը, ինչ ազգի որ ալ պատկանէր... Ասպետական ուղով, ժողովրդային պարզ, կոշտ և անգիտակից յեղափոխական էր, որ ի վերջոյ գիտակցութիւն ալ ստացաւ. և միշտ կը կրկնէր՝ «Շուտ ընենք, շուտ, մի մաս կոտորուինք և մի մասը թող ազատուի»... Կա կը նախադուշակէր իր մահը և իրեն փառք կը համարէր: Իր միակ փառասիրութիւնն այն էր, որ աշխարհ զինք գովէ ու անունը յիշէ, և նա իսկապէս այնքան լաւ գործեց ու հերոսաբար նահատակուեցաւ, որ ոչ միայն ազգի կողմէն յիշատակութեան արժանի է, այլ և տօնելու... Հնչ. Կուսակցութիւնն եթէ ա-

մենանշանաւոր հերոսներ ունեցեր է, նոցա կարգին մէջ ամենալաւ տեղերէն մին կը բռնէ Կարապետ Ղըր-Փանոսեանը, և Արիկիայի այնպիսի մի հերոս, շատ արժանիքներով օժտուած, չեմ կարծեր թէ շատ ունենայ... Ամբողջ ժողովուրդը լացաւ և շատ շատերի բերնէն լսեցին՝ «Երանի թէ մեզնէ հարկը հոգի մեռնէր և Զալազը չի մեռնէր»... Մենք ալ ողբացինք մեր հերոսի մահը, բայց կը նախաձիւնք իր անհասանելի փառքին...

Արիւն ամբողջ 4-ժամ տեւեց և վերջացաւ յաղթութիւնն անորոշ մնալով: Ամենքը հաւաքուեցան Չախլը-Տէրէ և մի քիչ հանգստանալէ յետոյ, Կիրակի կէս օրին բանակը շարժեցաւ դէպի Զէյթուն, 100 քաջեր թշնամիի բանակի դէմ թողլէ յետոյ:

Այն իրիկուն այդ 100 ալապաշի քաջերը յարձակեր էին թշնամի բանակի վրայ և ճիշտ այդ գիշեր ամենքը ցրուեց փախուցեր էին:

Հայկական բանակը երբ ճանապարհ ընկաւ դէպի Զէյթուն, գնալով ստուարացաւ: Հետզհետէ իրենց խմբերով օգնութեան հասան Թէլէմէլի գիւղէն, Գըննուզէն Մանուէլ աղա Ալաճաճեան և Բարդուղիմէոս վարդապետ: Իսկ երբ Շէնպէքի վրայ հասաւ, այդտեղ ևս Զէյթունէն՝ ապստամբապետ Մէրիկէնեան Հաճիի խումբը և Եղիալէր ու Մուրթաթալար Հայաբնակ գիւղէն 200 հոգու չափ օգնութեան հասան: Ընդամենն այդտեղ 600 քաջեր, ուր բանակ դրուեցաւ Շէնպէքի ստորոտը Կիրակի իրիկուն, հոկտեմբերի 15-ին, Խախտոց (Օյնախ) ասած հայաբնակ գիւղը: Գիշերն այդտեղ բոլոր պատերազմական խորհուրդները կատարուեցան և գիշերուան ժամը 8-ին ճանապարհ ելաւ հայկական բանակը իր դրօշակներով և ժամը 10-ին մտաւ Զէյթունի եղերքն այգիների մօտ՝ զորանոցը պաշարելու համար:

Այստեղ բանակը երկուքի բաժանուեցաւ: Զէյթունի վերի թաղի Նազարէթ իշխանի մարդիկ՝ Կուսակցութեան գլխավորների հետ ուղղուեցան դէպի հիւսիս և զորանոցի վրայէն՝ անցնելով՝ մտան Զէյթունի Ս. Աստուածածնայ Առնքը: Իսկ Պող-Այալիցիները, ապստամբապետ Համ-Քէշիշեանի հետ զորանոցը պաշարեցին հարաւային և արեւմտեան կողմերէն, իրենց հետ ունենալով Կարկալար թաղի քաջերը, իրենց պետ ունենալով Կարապետ էֆ. Տէր-Յակոբեանը, Աւետիք Տէր-Ղազարեանը (Սմբատ էֆ. եղբայրը), Փանոս Խըղզըրթեան քաջ և հաւատարմը, Սարգիս Բօշճեան քաջ երիտասարդը, որ նոր եկած էր Հալէպի բանտէն, Ղըրճ-Օղլու Աբրահամ անուն քաջ և կրակոտ 70 տարեկան ծերունի ապստամբակա՞ր իր 5 որդիներով և Անդէասեան Ասատուր աղայի 4 հետ կտրիճ եղբայրները:

Իսկ վերի թաղի քաջերը կրկնակի զինուած՝ դուրս եկան վանքէն, Նազարէթ իշխանի եղբայր Սարգիս աղայի հրամանատարութեան ներքեւ, գնացին կտրել զորանոցի ջուրը և զորանոցը պաշարեցին արեւելեան կողմէն: Իսկ Սուրէնեան թաղի քաջերը, Մէրիկէնեան Հաճիի և Սուրէնեան աղաների հետ զորանոցը պաշարեցին հիւսիսային կողմերէն: Մի մեծ ժողովրդային գունդ ևս պաշարեց քաղաքի պարստի մէջ եղած զօրքերը:

Բոլոր կողմէ պաշարուած վերջացած լինելով՝ լսկըսաւ կատաղի յարձակումն ու հրացանաձգութիւնը: Բիւրաւոր գնդակներ կարկուտի նման ամեն կողմ կը տեղային. իսկ Զէյթունն ու զորանոցը բոլորովին մու-

խի ու ծովի մէջ էր պատուած... Ահագին գոռուքն ու գոռուքն միւս կողմէ դժոխային մի դարձուածի երեւոյթը կը ներկայացնէր...

Չէյթունի մէջ կիներն ու երեխաները չուէր հագած՝ լեցուած էին եկեղեցիների մէջ, անօթի ու ծարաւ սկսած էին աղօթել ու Աստուծոյ կանչել: Այդ օրը, երկուշաբթի օրը, հոկտեմբերի 16-ին կուէր շատ կատաղի եղաւ երկու կողմէն ևս. պաշարող հայերի թիւը մօտաւորապէս 2,000-ի կը հասնէր: Հետզհետէ գիւղերէն նոր-նոր խմբեր կը հասնէին: Այդ օրն ամբողջ կռուելով՝ հայերէն մէկ հոգի միայն մեռաւ և 2 ևս վերաւորուեցաւ, իսկ թշնամիներէն շատ աւելի մեռան: Զօրանցի մէջ ջուր չը լինելով՝ զօրքերը դուրս կը խուժէին զօրանցի մօտակայ տները և այդ տներէն կը տանէին ջուր և այդ տեղերէն կը կռուէին: Իսկ այն զօրքը, որ զօրանցէն դուրս կը գար, իսկոյն գնդակահար կը լինէր. հազիւ քիչեր փախչելով կազատէին: Արդէն զինուորական պաշտօնեաները օր առաջ մօտակայ տներէն զօրանցի մէջն էին փոխադրեր իրենց ընտանիքները: Զօրանցն առնելու համար՝ պէտք էր առնել այդ տները: Քաջ Պօղ-Պայրցիները, ընդհանրապէս բոլոր զէյթունցիները, սկսան առաջ խաղալ: Եթէ ռազմագէտ մը տեսնէր թոյն կուէր, ինչքան պիտի զարմանար այս կոշտ-կոպիտ ժողովրդի ռազմագիտութեանը վրայ... որ այնքան ճարպիկութեամբ յառաջ կը գնային... Եւ ահա կէս օրուան մօտերը սկսան կամաց-կամաց գրաւել զօրանցի մօտակայ տները և վառել զանոնք...

Գիշեր էր: Պաշարուած կրկին նոյն կատաղութեամբ ու յամառութեամբ կը շարունակուէր երկու կողմէն ևս... Գիշերանց երկու զինուոր միայն փախեր էին, որոնք կիւրեակտին բերդի մօտ պատահելով ալպաշցիների, այնտեղ կը սպաննուին:

Յարձակման և հրդեհակոծի ամենայնգոգն ձեռնարկների մէջ մեծ դերեր կը խաղային նշանաւոր ասպատակապետը՝ Պօղ-Պայրի թաղէն Մեւքիսեդեկ և Օհոտեանը, Գեորգ Մարաշլեանը, սարսափելի յանդուգն, որի անունը թիւրքերը դրեր են թօփուզ և Աւետիք Ղըլընճը:

Օտրմանալի էր տեսնել նաև այլ քաջերի մղած կատաղի կռիւը. անոնք նոյն գիշեր դեռ կատաղութեամբ ուստիկաններ էին և որոնք մարթիները խլած եկան ոյժ տալ և նախադարձակ լինել պաշարման ժամանակ: Սոցա մէջ նշանակելի են՝ Փանոս Պըղտեան որ երկու տարիէ ի վեր թրքական սուրհանդակի հետ կռուակցութեան նամակներն ալ կը տանէր, Մարաշցի Սարգիսը, Շիվիկեցի Սարգիսը, Ղուկասեան Յովակիմը, մանաւանդ Արթին չափուշ Պօյա մեանը, մօտ 50 տարեկան, որ դուր ու դուրս չուած՝ մէկ այս, մէկ այն կողմ՝ կը վազէր և սիրտ ու խրախոյս կը տար: Սորա նման հերոսական գործ կանէր, խրախոյս կը տար ու կարգադրութիւն կանէր Օղուլուխեան Մանուկ անուն քաջ և անձնուէր երիտասարդը, որ ի վերջոյ, երբ զօրանցն առնուեցաւ իսկոյն անցաւ թնդանօթներու մօտ և եղաւ թնդանօթաձիգ: Սորա օրինակելի հելլենական քաջութիւնն այն եղաւ, որ դրօշակն առած իր ձեռքը, գնդակի տարափի մէջէն անցնելով, երկու ուստիկան սպաննեց և տարաւ դրօշակը անկել ճիշտ զօրանցի պատին առաջ ժողովրդի անհամար կեցցէների մէջ... Իսկ առաջին անգամ, որ կրուրի թնդանօթները դուրս հանեցին հայերի վրայ պարպելու, 2 օլագեան ֆանոս անուն քաջ երի-

տասարդը զարկաւ թնդանօթաձիգ չափուշ. ասոր վրայ թնդանօթը ներս քաշեցին:

Հոկտեմբեր 17, երկուշաբթի առուր առաւօտն էր. պաշարուած աւելի սաստկացաւ. թշնամին դուրս հանեց կրուրի թնդանօթները և սկաւ նետել պաշարողների վրայ: Մինչև այդ ատեն հայերը կը զողային թնդանօթներէն. բայց երբ անգամ մը նետուեցաւ, Զէյթունի առիւծները ոչինչ համարեցին զայն և զարմանալի էր տեսնել թէ ինչ ճարպիկութեամբ հրացան կարձակէին և ապա կը խուսափէին թնդանօթի ռումբերի առջևէն: Մի կողմէ արագօրէն կը շինէին պատսպարաններ, մի կողմէ կը կռուէին և միւս կողմէ կը հըրդէին: Այդ օրը թշնամին կատաղած 40-էն աւելի թնդանօթ արձակեց: Սուրէնեան թաղի քաջերը, Մեւքիսեան Հաճիի առաջնորդութեամբ արդէն շատոնց մօտեցեր էին պարսպի հիւսիսակողմին: Արի թաղեցի քաջերը՝ Նորաշխարհեան Սարգիս աղայի առաջնորդութեամբ արևելեան կողմէն՝ բաւական մօտեցեր էին զօրանցին: Այս թաղի մէջ նշանաւոր հանդիսացան թէ զօրանցի պաշարման ժամանակ թէ 2 ախլը-Տէրէի յարձակման միջոցին հետեւալ քաջերը. Խաչեր Պօյաճեան, Գալուց Կիւճիւկեան, Մինաս Ղաղաեան, Խաչեր Գալայճեան, Եղիա Տինպիւեան, Խաչեր Խըւըշեան, Թաթէոս Գրիգորեան և Պապիկ Մըտիշեան անուն Ալպաշցի հաշակաւոր ասպատակը:

Իսկ Պօղպայրցի քաջերէն մին, Եօղուեան Մարտիրոս անուն, այնչափ յանդգնեցաւ, որ ճիշդ զօրանցի դուռն մօտ գնաց, սպաննեց մի զինուոր, առաւ անոր մարթիների հրացանը և զինուորին ալ ոտքէն քաշկռտելով տարաւ մինչև Զէյթունի ձորը:

Օտրմանալին այն էր սակայն, որ քաղաքի մէջ եղած ժողովուրդը այն աստիճան վարպետութեամբ էր պաշարեր զօրքերը, որ ոչ մի հրացան չարձակեցին մինչև անձնատուր լինելը. մինչև այդ ատեն արդէն պաշտօնեաներէն շատերը փախեր էին և գայմագամը տեղափոխուեր էր Վասիլոսեան (Սուրէնեան) կարապետ աղայի տունը:

Առաւօտեան ժամը 2-ի միջոցներին հասաւ նաև «Աւ» զօրագնդի մի մասը՝ պ. Մէհի հսկողորդութեան ներքեւ, որոնք կարեւոր գործերի համար գնացեր էին Կապանի կողմերը: Երբ հասան՝ իսկոյն դիմեցին պատերազմի ասպարէզը և ժողովրդային գնդերի առաջն անցած մեծ խրախոյս ու քաջալիր եղան: Նոցա մէջ դարձեալ նշանաւոր հանդիսացան և քաջաբար կռուեցան՝ Այնթապի խմբէն Կարուճ և Մանուկ Պիլէմճեանները, նշանաւոր կարիճ՝ նախապէս «Մարօ» զօրագնդի անգամ և ապա «Աւ» զօրագնդի փոխադրուած՝ Փայլակը (Յակոբ Օհանեան): Իսկ Հաճիին խմբէն՝ Հնչակեան գործիչ պ. Միհրան Գայեան մեծ քաջութեամբ կռուեցաւ և սպաննեց 2 զինուոր:

Կէս օրուայ մօտերն էր: Արդէն Զէյթունի հըռաշակաւոր Աքիլէսները՝ Շամ-Գէշիշեանը և Մեւքիսեանը վառեր էին բաղնիքը և շատ տներ: Ճշմարիտն ըսած, զօրանցի մէջէն ալ կատաղաբար կը կռուէին. ամբողջ օսմանեան բանակները չունին մէկ այսպիսի քաջ զօրագունդ (թապուր): Ի վերջոյ իմացանք թէ նոր պաշարուած ատեն շատ ոչինչ կը համարին եղեր զէյթունցիները և միշտ կը կրկնեն եղեր՝ «այն մի կռիւ բացուէր և ցոյց տայինք զէյթունցիներին մի թապուր»... Արջապէս չէ կարելի ուրանալ, որ մեծ քաջութեամբ կը կռուէին. ի վերջոյ իմացանք նաև, որ

այդ յամառ կռուի պատճառ եղողներն, եռանդ ու ոգի արծարծողները եղեր են երիտասարդ գայրոցական յիսնապետները:

Իրիկնադէմի մօտ էր: Հայերի կողմէն այդ օր ամբողջ մեռածներն էին 3 հոգի և երկու վիրաւոր: Մեռնողներէն մէկն էր վերը գոված ՆՕՏՈՒՄԵՐԱՆ ՄԵԼԲԻՍԵԳԵԿԻ հօրեղբօր որդի՝ դարձեալ ՄԵԼԲԻՍԵԳԵԿԻ ՆՕՏՈՒՄԵՐԱՆ, որ մէկ օր վիրաւոր պառկելէ յետոյ մեռաւ: Երկրորդ մեռնողն էր ԱՄԱԿԱՅԻ ՄԱՐԿՈՍ ՄԱՐԿՈՍԵԱՆ, երրորդը դարձեալ ԱՄԱՔԱՆԻ առիւծներէն ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐԵՆԸՄԸ (սա այն առիւծն էր, որ հրացանը շինել տուած ատեն կը պոռար. «մի մէկ անգամ հրացանս պայթէր և ապա ես ալ մեռնէի...»): Երրորդ մեռնողն էր ՊԱՆԿ ԲԵՕՆՈՒՄԵՐԱՆ, մօտ 58-60 տարեկան. սա շատ հուշակաւոր էր իր անցեալի մէջ: Եթէ ԶԵՅԹՈՒՆ 4 ընտրեալ Արիկներ ունի, մէկն ալ ՊԱՆԿն էր: Ամբողջ ԶԵՅԹՈՒՆ ցաւեցաւ սորա մասին: Ժողովուրդային առիւծն էր, որ տապալեցաւ: Բոլոր կռիւք Արիկիայէն երեք հերոս տարաւ. մին ԶԱՄԻՐ, մին ՊԱՆԿն էր և միւսն ալ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐԵՆԸՄԸ. քիչ ունի ԶԵՅԹՈՒՆ և Արիկիան այդպէս քաջեր:

Իրիկնադէմին էր: Ժողովուրդը կատաղած ամէն կողմէն կը պոռար «եախարժ, եախարժ, թէսլիմ օլուն, վալաճի եախարժ» (կը վառենք, կը վառենք, յանձնուեցէք, ճշմարիտ կը վառենք)... Իսկ զօրքերուն ուղղեալ կը պոռային «մեղք էք, մեղք էք. ձեր զօրապետները ձեր արիւնքը մտնել կուզեն. մեղք էք, յանձնուեցէք, ձեզ բան չենք աներ»... Իսկ ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ անմահ և հերոս գործիչ քաջ ԱՄԱՏՆԻ իր ետին ունենալով ՀԱՄՔԵՂԻՆԵՐԸ կը պոռար. «կամ ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ կը թաղենք այդ վրատակներին ներքեւ և կամ աւելի կամրացնենք նորա շէնքի վրայ»... Իսկ ներսէն կը պոռային «անձնատուր չենք լինիր. կամ կը յաղթենք և կամ զօրանոցի վրատակների տակ կը թաղուինք»... Կարծես օսմ. պատմութեան անկման ատեն նոյն միջագայլը տեղի կունենար, ինչպէս ծաղկած ատեն, երբ ՔԱԹՈՒՄԸ ԿՈՍՏԱՆԳՈՒՆԵՆ ՊՕԼԻՍՆ ԽՈՒՄՆ... Իսկ ՀԱՄՔԵՂԻՆԵՐԸ կը պոռար. «պիտի առնեմ, պիտի առնեմ, պիտի առնեմ» ԶԵՅԹՈՒՆ ԶԱՆԱԳՎԱԼԵՆ... «Ժողովուրդային անգիտակից առիւծը կոնակ կունակի տուած յեղափոխական գիտակից հերոսի հետ՝ անհաշտ և վճռական կռիւ կը մղեն, տապալելու համար բռնութիւնը... կործանելու համար դարաւոր թշնամին, որ տղուկի նման հայ ժողովուրդի արիւնն է քամած և միայն չոր ոսկորը թողած:...

Գայրոցական յիսնապետները կը յամառէին և կը սրտապնդէին զինուորները, թէպէտ իրենց ջուրի աղբիւրները կարուած էին... Արեւմտեան սկսան հայերը յուսահատիլ և տրտնջալ, վախնալով որ պաշարոււմը կուշանայ և դրսէն թուրքերէն օգնութիւն կը հասնի:

Այդ ժամանակ ահա՛ ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ գործիչները խորհեցան մի ոգիսական հնարք, ինչպէս ՏՐՈՎԱԳԱՅԻ առման ժամանակ:

ԱՄԱՔԱՆԻ աղա ՉԱՔՐԵԱՆԸ և ՄԻԱՅ. ԸԿԵՐՈՒԹԵԱՆԵՅ ԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ ԱՄԵՐԻԷ ԷՖ. ԿԻՍԻԱՆԵԱՆԸ, որ ջերմ կերպով միացած էր սկիզբէն իվեր և երկու տարիէն իվեր ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ մեծ ծառայութիւններ էր մատուցեր, նախաձեռնեցին մեզ իրենց քաջութեան հետ իրենց հմուտ հնարագիտութիւնները... ԱՄԱՔԱՆԻ, որ միշտ կը պոռար «պիտի առնենք, պիտի առ-

նենք», բերաւ մեզ այնպիսի վարպետներ, որոնք մէկ օրուան մէջ պատրաստեցին մեզ երկաթապատ մէկ աւելաւոր կառք, որի մէջ 4-րդի էր նստիլ 10 հոգի և ետեւէն քշելով հասցնել զօրանոցի դուռը: Կառքն այնպէս էր շինուած, որ ոչ թնդանօթը, ոչ ալ կապարը կարող էր ծակել կամ փշել. պատրաստուած էր նաև 8 թիթեղ քարիւղ, օղի և ջրհան, այնպէս որ կառքով պիտի մօտեցուէր զօրանոցի դրան և ջրհանով քարիւղ և օղի սրբակուէր դրան վրայ պատշգամի նման դուրս շինուած ԳՆԴԱՊԵՏԻ սենեկին: Գիշերը վրայ հասեր էր, նշանաւոր պատմական դէպքը տեղի պիտի ունենար. — ԶԵՅԹՈՒՆ ԲԱՄԵՐԱՅԻ ԻՐ ԶՕՐԱՆՈՑԻ ԳՐԱՆԻՄԸ ԵՒ ԹՇՆԱՄԻՒՒՄԸ ԵՒ ԹՇՆԱՄԻՒՒՄԸ ԵՒ ԹՇՆԱՄԻՒՒՄԸ:

Միւս կողմէ ՀԱՄՔԵՂԻՆԵՐԸ և ՄԵՐԿԵՆԵԱՆ ՀԱՃԻՆ իրենց քաջերով առաջացեր էին և մինչև մզկիթի մօտակայ տները վառեր և սկսեր էին ձեռք առնել մզկիթը, որ յարակից էր զօրանոցին. մզկիթն առնելով զօրանոցն առնուած կը նշանակէր: Արեւմտեան թշնամին ալ ահա ուղի մէջ էր. ներսէն կիները ընկեր էին զօրքերի և զօրապետների ոտքերը, որ անձնատուր լինին և խնայեն իրենց. իսկ հայ հացագործների ոտքերուն փաթկուելով, կարերսն եղեր. «Արդեօք հայերն ալ մեզ կընեն այն, ինչ որ մեր զօրքերն ըրած են Սասունի մէջ հայ կանանց»...

Հոկտեմբեր 7, երեքշաբթի օր՝ գիշերուան ժամը կէսն էր: Լուր հասաւ, որ քաղաքի պալատի մէջ եղած զօրքերն անձնատուր կուզեն լինիլ այն նամակի վրայ, որ ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ Արիկիայի ներկայացուցիչը սպառնական կերպով գրեր էր գայմագամին և զօրքերի յիսնապետին: Այդ բարեյաջող լուրի վրայ ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ նշանաւոր և անմահ գործիչներէն մին պ. ՀՐԱՅԵԱՆ հետն առած մի քանի ընկերներ և ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ Արիկիայի առաքեալներէն պ. ՄԼԷՏՐ, ԽԱՐԵՐԵՂԵՅԻ, ԻՐՎԱՆ քաղաք և զօրքերը զինաթափ ընելով իր սրի ներքեւէն անցուց, ի նշան հպատակութեան և անձնատուր եղած այդ զօրքերը տեղաւորեց ԶԵՅԹՈՒՆի աղաներու տուններու մէջ: Ի վերջոյ ընդհ. ներկայացուցիչն Աստուածածնայ վանքէն ցնծութեամբ և աղաղակներով ու կեցցէներով իջուցին քաղաք, ուր կնքեց պալատի դուռը, ներսը թողնելով պ. ՄԼԷՏՐ, ԱՄԵՐԻԷ և աղա ՀԱՄՔԵՂԻՆԵՐԸ և ՊԵՐՈՍՈՍ աղա ՉԱՔՐԵԱՆԸ իբր հրակող և վերակացու:

Այստեղ անհնար կը լինի պատմել զԶԵՅԹՈՒՆԵՐԻ Ժողովուրդային ցնծութիւնը, գոհունակութիւնը, զոր արտայայտեցին ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ ներկայացուցիչ և Գործիչների առաջ: Ժողովուրդը թափօր կազմած՝ դրօշակներով, շարականներ երգելով, նոր երգեր յօրինելով՝ մինչև վանք տարին ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ գործիչները: Այդ բազմութիւնը հազարներ էին, որոց ամենքի բերանն էր «կեցցէ» և շարական... Կանանց գոհունակութիւնն ու աղօթքը տաճարի խուկէն աւելի օդը լեցուցած էր... Այդ բոլորի մանրամասնութիւնները ապագայի պատմութեան կը թողուք...

Գիշերուայ ժամը 2-ն էր: ԿՈՍՏԱՆԳՈՒԹԵԱՆ ներկայացուցիչը նորէն նամակ գրեց քաղաքապետին և անձնատուր եղած յիսնապետին հետեւեալ ոճով, հայերէն լեզուով.

«Գայմագամ պէյ և յիսնապետ ԷՖէնտի.

«Մենք մարդասիրող ոճրագործներ չենք. մենք, ճշմարիտ մարդեր, հայրենիքի առաջադիմութեան պաշտ-

պան ու հարադատ զաւակներն ենք: Եւ զայս ձեր աչքերով կը տեսնէք և կարող էք ապացուցանել, քանի որ ժողովրդի փոփոխութեան համար ոչ մի շահ չափնկալելով ինչ աստիճանի վտանգի մէջ դրած ենք մեր կեանքը: Թիւրք գիւղացին ու զինուորը մեղ չափ ձընշուած են և մեր եղբայրներն են. մենչև հիմա զօրանոցն օդը կը բարձրացնէինք մեր ուժանակներով, բայց մենք խնայեցինք ձեր ընտանիքները, երեխաները որ խելձ են: Գրեցէք զօրանոց որ անձնատուր լինին, ապա թէ ոչ ողջ ողջ կը վառենք զիրենք և օդը կը բարձրացնենք... մեղք են...»

Զէյթունի — Վանք. Ա... Հնչ. Կուսակցութեան ընդհ. Ներկայացուցիչ Կիլիկիայի:
17 հոկտեմ. 95, երեքշաբթի գիշեր, ժամը 2-ին:

Խակապէս Գայմագամը զարմացեր է, որ այսպէս բացարձակ խստապահանջներ կը գործածենք, բայց միևնոյն ժամանակ չէր ուրացեր, յայտնելով որ յայսպէս պատերազմ Թուան անգամ չըրաւ և սոցա ոչ վառօդը կը հասնի, ոչ ալ գնտակը... իսկոյն մի փողահար զինուոր, մի նամակ ուղարկեց Զէյթունի վարժապետներէն քաջ և անձնուրաց գործիչ պ. Յովհաննէս Ա հարոնեանի և անձնուէր երիտասարդ Մանուկ Օղուլուխեանի հետ զօրանոց: Նամակի մէջ գրուած էր, որ իրենք անձնատուր եղեր են, դուք ալ զօրանոցի զինուորներով անձնատուր եղէք, ապա թէ ոչ օդը պիտի բարձրացնեն ձեզ: Կէս ժամ պայմանաժամ տրուեցաւ զօրքերին, որոնք խորհրդակցելէ յետոյ, անձնատուութեան երկու թնդանօթ նետեցին... Ջարմանալին այն էր, որ նոյն նախկին մարտադու փողը չէր, որ կը հնչէր. այլ թոյլ, մեղալիք և երերուն, կարծես թէ հողեվաքի մէջ եղած հիւանդն էր, որ կը խօսէր... Հայոց յաղթութիւնը և թիւրքաց պարտաւթութիւնն ալ կատարեալ էր: ՏՕՐՈՍԻՒ (Շարունակութիւնը յաջորդ համարում):

*** 23, հոկտեմբ. 95.

Նախկին տեղեկագրովս գրած էի Զէյթունի զօրանոցէն գրաւուած թնդանօթներու թիւը 3 և մարթիններունը 600, իսկ այս անգամ հաստատուեցաւ, որ առաջինները 4 են, իսկ վերջինները 1,500-էն աւելի, որովհետև կանոնաւոր զօրքերուն պատկանածներուն հետ միատեղ ընտրիքներու տէրօն ալ գրաւած են: Կիրիտէն Մուստաֆա Զէյնի փաշան, իբր հրամանատար Զէյթունի վրայ զընկերք բանակի, 10 օր առաջ Խաբէնտէրունէն անցած էր ուղղակի Մարաշ և հետը միասին 20 թնդանօթ տարած էր և շատ մ'ալ ճէպխանէ (ազգամթերք). թուէս 4 օր առաջ քալեց Զէյթունի վրայ 12,000 զօրքով, որոնց միայն 900-ը կրթեալ կանոնաւոր զօրք են, իսկ մնացեալը անկիրթ ընտրիքներ: Երբ մօտեցաւ Զէյթունի լեռան ստորոտին՝ 3-4 ժամ մնացած մի հեռաւորութեամբ հոն օթեւանեց: Երէկ և առաջի օր Մարաշի թելով հասած հեռագիրներ յուսահատութեան պարզ խոստովանութիւններ էին. 50,000 կանոնաւոր և կրթեալ զօրք կը պահանջէր և 50 ալ թնդանօթ Զէյթունը գրաւելու լոկ և քոսկ յոյս մը կարենալ տալու համար. իսկ միւս կողմէն կը պաղատէր և զօրքերուն մօլճակ, վարտիկ և շապիկներ կուղէր՝ մերկ և բոկոտն մնացած զօրքերը քիչ շատ պատսպարելու համար, մինչդեռ ծաւալն ու անօթութիւնը իրենց ծայրագոյն աստիճանին

են հասած. իւրաքանչիւր զօրքին օրական պարսիմաթ մը կը տրուի, ամեն մէկ վրանի տակ 16 զօրք կը պառկի և ամեն 5-6 զօրք հազիւ ետ դուրսը դուրս կը ծածկուին եղեր: Մալիսէն բոլորովին սնանկացած է. 20,000 ոսկի մաքսէն փոխառութիւն ըրած են, որուն կէսը պաշտօնեայք կուլ տալէն յետոյ միւս կէսը 5-6 օրուան մէջ բոլորովին սպառած է:

Մարաշ զընկերք զօրքերուն ձեռքը տրուած մարթիններուն կէսը Հալէպի հարաւային կողմ գտնուող Հարէմ և Համուս քաղանքներու զօրանոցներէն բերուեցան, որ այդ կողմերու արապ աշխրէթներու յեղափոխութիւնը զսպելու պիտի ծառայէր. այժմ յիշեալ քերիպի պաշտօնական հեռագիրները կը հաստատեն, թէ այդ զէնքերը վերջին ծայր աւրուած են և չեն գործեր... Ահաւասիկ Զէյթունի վրայ եղած տաճկաց արշաւանքի հրոսակներու ոյժը:

Ատանայէն Այի պէյ անուն Միրալայի մը հրամանատարութեան տակ՝ նոյն վիլայէթէն վեց թապուր ճանապարհ ելած են Սիսի ճանապարհով՝ Զէյթունի ըստորոտը սպասող բանակին միանալու համար: Ատանան այս կերպով պարպուելէ յետոյ տեսնենք թէ այդ կողմերը ինչ շարժումներ սկսեցին:

Ատանա և իւր շրջակայք. — Երէկ Ատանայի վալին արսափահար կը հեռագրէր Ատանայի լեռանց վրայ հաւաքուած 5-6,000-էն աւելի հայ զինուորներու ապստամբութիւնը և ապառնալիքը. զօրք և օգնութիւն կաղաղակէր, եթէ ոչ Կիլիկիան ձեռքէ գացած է, կըսէր. Կառավարութիւնը շուարած է այժմ. ինչ ընելքը չը գիտեր: Զէյթունի համար Ատանայէն բերուած զօրքը Զէյթուն հասցնէ, թէ ոչ Ատանա ուղարկէ:

Սուէյտիա և Քէսասպ. — Հոն ալ կը լսենք թէ պայթեցաւ յեղափոխական հրաբուխը: Յիմար կառավարութիւնը հաւատալով, որ Սուէյտիայի բոլոր շրջանները թուած են Զէյթուն, Սուէյտիայի բոլոր թապուրները զընկած էր Զէյթունի բանակին միանալու: Այժմ խելակորոյս եղաւ նա, զօրք չունի, որ Սուէյտիայի և Քէսասպի վրայ զընկէ. ստիպուեցաւ Զէյթունի վրայ քալելիք բանակէն միայն 400 ընտրիք բերելով զընկելու. ասոնք երէկ Հալէպ հասան և այս երեկոյ ճամբայ պիտի հանեն ջորիներով և անգործ մարթիններով: Անտիոքի գայմագամը 2 օր առաջ կը հեռագրէր, թէ Սուէյտիայի կողմերը 5,000-էն աւելի ահագին ոյժով հայ բանակ մը հասած է Եւրօպայէն և կը դղրդեցնէ բոլոր Սուէյտիան և Քէսասպ և ուրիշ տեղերը... X.

Կուսակցութեանս գանձարանում ստացված նպաստների ցուցակը տեղի սղութեան պատճառով ստիպված ենք յետաձգել մինչև «Հին Հակի» առաջիկայ համարը, որ լոյս կը տեսնէ ամսիս վերջերը:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London, W. [Angleterre].